

բաղդը, այն, արմաւորիցի աղա, բաղդը մարդա-
սիրութեան մէջ է միայն...

Գր. Չալսուռեան
Նոր-Նախիջեան.

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԱԿԱՌԻՑ

Դեկտեմբերի 19-ին

Վախառուները, ինչպէս երեւում է, ասպա-
րէզը առ այժմ գիշերով ուրիշ տեսակի պարա-
գրաներին, այն է՝ հոտենտոտեան միտկին եւ
բզէզին, իրանց աւերիչ գործունէութիւնը գա-
ւառից տեղափոխել են քաղաք. Այսպէս, օրի-
նակ, մօտ ժամանակներս դրանց տիրապէտի
եւ վատ տեսակի պարագրաններէ մէկը դա-
տարկել եւ փակել տուեց մեր քաղաքի միջին
վաճառականներէ եւ իր նախկին բարեկամնե-
րից մէկի խանութը՝ միայն այն պատճառով,
որ խեղճ վաճառականը չէր ցանկացել մասնակ-
ցել վաչխառուի մի ստոր գործին, պախարա-
կել եւ երես եր. դարձրի նրանին: Այն նոյն
վաչխառուն 40—50 մարդու ցուցակ ձեռին, ո-
րոնք այսպէս թէ այնպէս իրան գուր չեն գա-
լիս, որոնք նստում-կանգնում էր, սրճատնե-
րում թէ այլ տեղեր, իրեւե մի մարմնացած
լըրութիւն, շարունակ սպանալիքներ էր կար-
գում, թէ դրանց բոլորի հախիճն էլ պիտի
գայ, «պիտի կորցնէ», ի հարկէ, իրան յատուկ
միջոցներով: Բարեբաղդաբար, վաչխառուն իր
այդ արշաւանքը կատարելուց յետոյ՝ հեռացաւ
քաղաքից եւ հասարակութեան ականջները
առ այժմ հանգստացան:

Հասարակական կարծիքը փոքր առ փոքր
մուտք է գործում գաւառը եւ բարերար աղբի-
ցութիւն է անում. սակայն շատ ցաւալի է, որ
հասարակական կարծիքի արտայայտման հա-
մակարհի եւ օրինաւոր ձեւերի հետ շատ ան-
գամ երեւան են գալիս եւ գուտ ասիական,
անվայել կոպտութիւններ: Այսպէս, օրինակ,
մեր քաղաքի հանգստարանում, ինչպէս ասում
են, մի հանգուցեալի գերեզման պղծում եւ
կեղտոտում են՝ նրա որդիների ստոր արար-
մունքների պատճառով: Մենք բուն կերպով
բողոքում ենք այդ տեղի եւ անպատեանք ե-
րեւոյթի դէմ եւ միանգամայն դատապարտում
ենք: Բարոյական եւ կրթիչ պատժներով մի-
այն հասարակութիւնը կարող է ուղղել իր ա-
րատւոր անդամներին:

Այսօր, երկրաշարժի տարեդարձի օրը, Բա-
րալէթ գիւղում, երկրաշարժից վնասվածներին
օգնող կոմիտէի անդամներ, վարչական անձ-
նաւորութիւնների, քաղաքացիների եւ հազա-
րաւոր պիւղաղների ներկայութեամբ, տեղի
հեռուգաւ պատարագ, ապա եկեղեցական թա-
փօր եւ բացօթեայ հողահանգիստ երկրաշարժից
պաշտպանների յիշատակին Հողահանգիստի ժա-
մանակ ժողովրդի միջից շատերը աղիւղորմ
լալիս էին իրանց մեռած սիրելիների համար:—
Յետոյ կատարվեց ընդհանուր ժողովրդական եւ
հանդիսաւոր գոհացողական մաղթանք Նորին
Մեծութեան Թագաւոր Կայսրի անողջանալու
պատճառով:—Պատարագ եւ հողահանգիստ կա-
տարվեց նոյնպէս եւ քաղաքի եկեղեցում:—
Մեղէն ու այսօր ժողովրդի շատ խաւեր անհան-
գիստ եւ խի, որովհետեւ զանազան տղէտ եւ
մուժ անձնաւորութիւններ թէ գաւառում եւ
թէ քաղաքում տարածել էին, թէ տարեդարձի
օրը երկրաշարժը պէտք է կրկնվի. տղէտ եւ
միամիտ ժողովուրդը հաւատացել եւ վախե-
նում էր: Սալլիւսան

Տեսնում էք. պ. Կոկարդը սրախօսութիւն
էլ դիտէ:

Այս միջոցում լաքները յուսահատութեամբ
վազվազում են սենեակից սենեակ եւ ձեռքերը
վառարաններին կպցնելով համոզվում են, որ
երկաթէ թիթեղը կլուրում մի փոքր աւելի
տաք է, քան «Գիւմուրդալա» կոչված ժայռի
սառուցապատ քարերը:

Անա եկաւ եւ հարազատ կապաւորուն: Նա
էլ մօտեցաւ վառարանին, ձեռքը դրեց վրան
եւ իսկոյն յետ քաշելով՝ փայտաց հեղնօրէն ու
հեռացաւ:

Իսկ Չերմաշափը, պատից կախած այս ան-
ողորմ Չերմաշափը, 8—9 աստիճանից չէ բարձ-
րանում:

Սակայն, ներողութիւն: Շաբաթը մի ան-
գամ, կիրակի օրերը, պօստը ստանալուց յետոյ,
ժամը 11—12-ին, երբ բարեխրտ արեղակը
անցնում է լուսանուտի միջով եւ իր թող
ճառագայթները ուղղակի Չերմաշափի վրա ձգե-
լով ստիպում է վերջինիս կամայ-ականայ
բարձրանալ, սա հասնում է մինչեւ 10 աս-
տիճանը: Այս կէտի վրա արդէն մեղիկը կը պ-
չում է ապակեայ նեղ խողովակին եւ մեխ-
վում ընդ միջոց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 26-ին

Նախապաշարմունքը խրատում է ամեն մի
նոր հասանքից, ինչպէս եղանակի նախըն-
կաթուղու դնալից, եւ զխաղաղապա փախ-
չում է հեռու, տանելով իր հետ այն տպաւո-
րութիւնը միայն, որ նոր հասանքը մի զարհու-
րելի բան է:

Որտեղ կայ նախապաշարմունք, այնտեղ կան
անպատճառ եւ նախապաշարմունքը չպիտի
ծողներ, որովհետեւ դեռ չէ եղել ոչ մի նախա-
պաշարմունք, որ ձեռնառն չը լինէր մարդկանց
այս կամ այն խմբին:

Այդ երկու գործոններով է ահա բացատր-
վում այն կատարի եւ կոյր թշնամութիւնը, որ
զարթնում է հասարակութեան մէջ ամեն մի
նոր շարժում, որքան էլ համակրելի լինի նա
բառ եւ լեզուներ:

Երբ քրիստոնէական աւետարանի քարոզը
հնչեց հին աշխարհի փառասկներէ վրա, արտա-
մարանքի եւ ատելութեան աղաղակներ թըն-
գային ի պատասխան նրան ժողովրդի այն
խմբերից, որոնք անընդունակ էին հասկանալ
հնադարեան աւանդութիւնների նեղ չըմանակի
սանձաններից դուրս եկող գաղափարներ կամ
որոնք չափերի տեսակէտից վնասակար էին այդ
նոր գաղափարները:

Դժուար էր գտնել այնպիսի անհիմնութու-
թիւն կամ արատ, որ հին կարգի եւ հին սկզբ-
բունքների պաշտպանները չը վերադրէին ա-
ռաջին դարերի քրիստոնէական եւ ասկան, եւ
եթէ եղել են աշխարհում մարդիկ, որոնք ա-
մենեւին տեղիք չեն տուել զրպարտութեան եւ
արժանի չեն եղել ատելութեան, ոչ առաջին
դարերի իդէալական քրիստոնէականներն էին:
Չարմանալի չէ ուրեմն այն ատելութիւնը, որ
զարթնում են իրանց շուրջը մարտնչող գա-
ղափարները, որոնք ոչ միայն սիրել են քա-
րոզում, այլ եւ ատել,—ատել այն, ինչ որ
փրկած է, ինչ որ չեղանալու է, բայց չէ ուղղում
չեղանալ եւ խոչընդոտ է հանդիսանում նորին:

Այդպիսի գաղափարներից է կանանց էման-
ցիպացիայի, ազատագրութեան գաղափարը,
որ ամեն տեղ ունեցել է նախապաշարմունք կամ
չափազանցած հակառակորդներ, որովհետեւ
ամեն տեղ կան մարդիկ, որոնք կարծում են,
թէ կնոջ խելքը մաղբորմն է, եւ ամեն տեղ
անհրաժեշտ երեւոյթ է, որ կանանց յետ տրվե-
լիք իրաւունքները խլվին տղամարդիկներից:

Որովհետեւ տղամարդիկ են եղել այդ իրա-
ւունքների յափշտակիչները եւ կանանց գա-
հիմնները:

Ինտուն մի տեղ ասում է, թէ այն
օրից ի վեր, երբ Պիթագորէ իր յայտնի թէո-
րեմայի լուծումը գտնելուց յետոյ հարկը եղ
գոհ բերեց աստուածներին,—եղիները սկսում են
բառաւոր ամեն անգամ, երբ գտնվում է աշ-
խարհում մի նոր ճշմարտութիւն:

Եւ այդ բառերը բարձրագույն Եւրօպայում,
երբ հանդէս եկաւ «Նոր Եւայի» գաղափարը,
երբ կինը սկսեց բարձրագույն քարոզել այն
ճշմարտութիւնը, որ ինքն էլ մարդ է, մարդ-
կային արժանապատուութեամբ ու իրաւունք-
ներով, եւ ոչ թէ հարեմային մի արարած կամ
մի խօսուն խաղալիք:

Նոյնը, ինչ որ տեղի ունեցաւ Եւրօպայում,
պէտք է կրկնվի եւ կրկնվի աստուածները
մեր նման մի ասիական ժողովրդի մէջ: Մեղ-
նում էլ հին կարգերի սիրահանները կամ այդ
կարգերից չափողները կոխ յայտնեցին կանանց
շարժման, իսկ նրանք ամենքը, որոնք լուսաւոր
գաղափարներ էին տարածում մեր խաւար
կենսութեւ, ինչպէս Գր. Սերժանտը, Բաֆֆի եւ
այլն, պաշտպան կանգնեցին կանանց ոտնակոխ
արված պատին եւ իրաւունքներին:

Ժամանակները բաւական փոխվել են եւ քա-
ղաքակրթ Եւրօպայում օրէցօր նորանոր նուա-
ճումներ կատարող յաղթական ֆէմինիզմը հա-
մակիր արձագանք է գտնում եւ մեր փակ
կենսութեւ, առանց անաղ ըրելու առաջիններ:

Ընթերցարանում պատերի տակ շարված են
մի քանի պահարաններ, որոնց մէջ պահվում
են կլուրի գրքերը:
Սա էլ մեր գրադարանն է:
Ամեն երեկոյ մտնում է մատենադարանա-
պետը, անթիւ անգամ փայտէ սանդուղը դէս
ու դէն քաշչում եւ գրքեր հանելով՝ բաժա-
նում անդամներին:

Այս պարտքը մի խեղճ, ինչպէս ասում են,
«Աստուծոյ գառն» երիտասարդ՝ այնքան է
հասկանում գրադարան պահելու հեշտ ար-
հեստը, այնքան է ճանաչում իր պարտակա-
նութիւնները եւ իրաւունքները, որքան եւ եւ
գուց կը հասկանանք, թէ ինչպէս անտալիս
պետը կարող է մանկավարժի դեր կատարել:

Գրքերը եւ լրագրները բաց են թողնվում
տուն առանց տեսարկի: Գիրք վերցնողի ստո-
րագրութիւնը համարվում է վերաւորական
արժանապատեւ անդամների համար: Մինչդեռ
գրքերը սաղ-սաղ կանելով, ընթերցարանական
գրաւեղանից պատկերազարդ շաբաթաթերթեր
ան գիտութեւս մը եւ մոռացմամբ գո-
ղանալ սովորական բաներ են:
Պատասխանատու:
Ո՛չ ոք, ի հարկէ:

կրճատներ: Սակայն, չարախօսութիւնը եւ զըր-
պարտութիւնը չեն ոչնչացել անհետ, եւ ժա-
մանակ առ ժամանակ լսվում են հին երգեր:

Այդ հին երգերից է Կ. Պօլսի «Սուրհանդակ»
լրագրում տպված ժընկվի թղթակցութիւնը,
որի մասին խօսք եղաւ «Մշակի» № 243-ում:

«Ուսանողների մը» ստորագրութեան տակ
թագնված մէկը ճշում է այդ թղթակցու-
թեան մէջ ցին չարտել ժընկվի ուսանալու ու-
սանողներին վրա: «Մշակի» խմբագրու-
թեան կողմից արդէն կատարած է ո յայտնված
այդ մեղադրանքների ճշգրտութեան նկատմամբ
եւ խմբագրութիւնը կոչ էր ուղղել ժընկվի
ուսանալու ուսանողներին վերցնել իրանց
վրայից այդ մեղադրանքները: Դէտք է լուսաւ,
որ նրանց կողմից այդ մեղադրանքները չեն
մնալ անպատասխան:

Սակայն եւ, իբր անձամբ ծանօթ ժընկվի
ուսանալու ուսանողներին, պարտականու-
թիւն են համարում, իբր կողմնակի վկայ, բո-
ղոքել «Սուրհանդակ» թղթակցի դէմ, որի
ձեռքը չարժվել է զրկելու ուսանալու ուսանո-
ղուհիների մասին ընդհանրապէս, թէ նրանք
չէրան անմեղ չարժեմներ, կուսական նայ-
ուածներ, ամօթխածութիւն են այն, թէ
նրանք «մէյմէկ անպարկեշտ էակներ» են եւ
այլն:

Անբարեխղճութիւնը, ինչպէս սովորաբար,
այս դէպքում էլ ձեռք ձեռքի տուած է գնում
խելքի սանձանափաթկութեան հետ, եւ մարդ չէ
իմանում ինչի վրա աւելի զարմանալ «Սուր-
հանդակ» թղթակցութեան մէջ,—նրա հեղի-
նակի անսանձան յանդիմանութեան վրա, թէ նրա
ողորմելի արմաւարանութեան վրա, որի համաձայն
դուրս է գալիս, թէ ուսանալու ուսանողուհի-
ների «մէյմէկ անպարկեշտ էակներ» դառնալու
պատճառն այն է, որ նրանք ամբողջ օրը վաղէ
վաղ գնում գալիս են համալսարանից քիմիա-
կան դպրոց եւ որ նրանց սենեակի ամբողջ
կաշ կարաթիքը մի անկողին է, մի սեղան ու
երկու աթոռ, իսկ ծաշն էլ խոցուկ ճաշ է մի
էփան ճաշարանում,—եւ թէ այդ «անպարկեշտ
էակներ» ոչ անմեղ չարժեմները, ոչ կուսա-
կան հալեցիները եւ ամօթխածութեան լազա-
կայութիւնը ներկայացնում են այն բանը, «քիչ
մը բարեբաժնած ձեւեր տակ», «պոստանալ
զրադիտութիւն մը կը կարծէ ըլլալ կիններու դերը
500 տարի յետոյ միայն»:

Ինչպէս տեսնում էք, զրպարտութիւնից պօ-
ստանալ զրադիտութիւններն էլ լաւ բաժին է հաս-
նում, որովհետեւ այն ինչ այժմ ներկայացնում
են ժընկվի ուսանողուհի ուսանալու «անպար-
կեշտ էակներ», իդէալ է թուում պոստանալ
զրադիտութեւ համար, այն էլ դեռ անմեղ
զրուցիւնը «քիչ մը բարեբաժն» է, ապագան աւելի
թոււոյ է լինելու:

Այդպիսի ողորմելի թղթակցութեան վրա
թերեւս չարժէր այսքան ուշադրութիւն դարձ-
նել, բայց չէ որ զրպարտութիւնը, ինչքան էլ
յիմար ձեւով արված լինի, թեւաւոր է լինում
եւ անտեղի, ուր ճշմարիտ գոյականներ կուչ
գալիս գտնելիս, ընդունակութեան սպասելով,
զրպարտութիւնը ներս է թափանցում անմի-
ջապէս եւ անարգել:

S. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, դեկտեմբերի 15-ին

Ի նկատի ունենալով իմ շօշափած հարցի
ընդհանուր հետաքրքրութիւնը, յուսով եմ, որ
չէք մերժի տեղ տալ ներկայ նկատողութիւն-
ներին:

Ո՛վ չէ լսել ամենախիստ մեղադրանքներ հայ
թատրոնի հասցէին ընդհանրապէս եւ դերա-
սանների մասին մասնաւորապէս. էլ չենք խօ-
սում զանազան թերթերում լոյս տեսած բէյնե-
ղիաների մասին, որոնց մեծագոյն մասի մէջ
կայ միմիայն ձգտումն հայ դերասանի մէջ պա-
կասութիւնների տեսնելու, թէ նրանք դերերը
չը գիտեն, թէ նրանք դուրս են բնական ըն-

կորած, գողացված իրն է միայն մեղաւոր:
Իսկ անգլայ, անշունչ առարկաներին պատժել,
տուգանքը ենթարկելը, դեռ եւս ընդունված
չէ մեղ մօտ:

Բայց մենք ուշացանք: Դուրս գնանք: Մի
ուրիշ անգամ էլ, եթէ հարկը կը պահանջէ
կամ ցանկութիւն կունենանք, կարող ենք
մտնել:

Ընթերցարանի չէմքը չանցած՝ մէկ էլ տես-
նում ենք մի հարաւորոց է ընկել դուրս:

Պատշգամբի վրա մի՛ արտաբերատ պատկա-
ռելի մարդ, ամբողջ տունը զլուխ առած, ա-
նիծելով անիծում է եւ հայտնելով հայտնում
չը գիտնէ ո՞ւմ եւ ինչի համար:

Իմ հետաքրքրութեանը բաւարարութիւն
տալու համար ինձ հրաւիրեցին մի սենեակի,
որտեղ ձախ անկիւնում, վարագոյրի ետեւը,
զրված կար տիեզերահռչակ էլիքօսի ֆօնօ-
գրաֆը:

—Արա մէջ դուք կը գտնէք—ասացին ինձ—
այդ մարդու ամենաբնորոք յիշգիւնի հարուստ
եւ անսպառ ժողովածուն, որով նա վաղ ա-
ռաւօրից մինչեւ ուշ գիշեր հիւրասիրում է
կլուք՝ մանաւանդ ընթերցարան յաճախողների
ականջները:

զուսակութիւններից եւ այն: Մի խօսքով քիչ
է մնում, որ նրանց մէջ չը գտնեն նաեւ մարդ-
կային արժանաւորութիւններ. ամեն մի նոր
պիէս արվելիս հայ դերասանը դառնում է այն
նշանակեալը, որին հասնում են հարուստներ,
թէ բեցէնդէստների եւ թէ quasi—բեցէնդէստ-
ների կողմից:

Ես չեմ ուրանում, որ հայոց ներկայացում-
ները անաղղ են գնացել եւ գնում են, բայց
թող եմ տալիս ինձ առել, որ ապագայում եւս
չեն խոստանում աւելի լաւ գնալ, ի նկատի ու-
նենալով այն պայմանները, որոնց մէջ զրված
է այժմ գործը: Մինչեւ այժմ դեռ ոչ ոք չէ
տուել ինքն իրան այն հարցը, թէ ինչն է իս-
կապէս այս բոլորի պատճառը, եւ որն է հայ
դերասանի առաջադիմութեան կամ աղողու-
թեան խոչընդոտը: Անա իմ նախակի նպատակը
եւ անա այն հարցը, որ ինձ միշտ հետաքրքրե-
լիս է եղել եւ որ ես կաշխատեմ այժմ իմ ոյ-
ժերի ներածին չափ լուսաբանել:

Գլխից սկսելով, կենսական արդիւնաբեր պատ-
ճառը նրանումն է, որ թատրոնի դեկը գտնվում
է անձեռնհաս մարդկանց ձեռքում. ամեն մէկը
կը համաձայնվի ինձ հետ, որ ամենաշինք
գործն անգամ չէ կարելի առաջ տանել, եթէ
ինքը ղեկավարը հմուտ չէ գործին, իսկ ինչ
վերաբերում է թատրոնական գործին, նա պա-
հանջում է մեծ փորձառութիւն, որովհետեւ
ամենահմուտ անարդարեւորներն անգամ անան-
կացել են, օրինակ, Լէւոնտիլի, Մամոնտով,
Սէտով, կարտավալո եւ այլն: Համաձայնվեցէք
ինձ հետ եւ դուք, պ. խմբագիր, որ եթէ ինձ
յանձնեն ձեր թերթի խմբագրութիւնը, հէնց
առաջին համարում այնպիսի կուրիոզներ կը
պատահէին, որ բոլոր բաժանորդները կը փախ-
չէին: Կամ կարող եմ արդեօք նախապահել քա-
ղաքական վարչութեան նիստին, քանի որ կենս-
բուս ճայնաւոր չեմ եղած:

Կրկնում եմ, թատրոնական գործի վրա նա-
յում են այնպէս, որ ամեն մէկը իբր թէ կարող
է գործի դուրսը անցնել, միայն թէ նա լինի
խնայողէն: Սակայն կարծիք: Սակայն որպէս զի
լոկ խօսքեր չը լինեն առաջներս, դիմում եմ
փաստներին:

Ինչպէս ամեն մի գործ, նոյնպէս եւ թատրո-
նական խումբ կազմակերպելիս հարկաւոր են
ոյժեր. մի թերթի խմբագրութեան կազմակեր-
պութեան համար հարկաւոր են, բայց խմբա-
գրից, նաեւ հրատարակիչ, սրբագրիչ, յօդաւո-
ճագիրներ, քրօնիկագիր, հաշուապահ, ցըր-
վիչ եւ այլն: Իսկ անգնում թատրոնական
խումբը կազմակերպելիս բոլորովին հակառակն
են գործում: Ովքեր են հայ թատրոնի գործիչ-
ները, Մ, Մ, Շ—ուրեմն հարկաւոր է նրանց
հրաւիրել. այդպէս ուրեմն, խմբագրութիւնը
պատրաստ է, մնում է միայն մտածել թէ ինչ
լրագիր հրատարակել. բայց չեն մտածում, որ
այդ Մ, Մ, Շ-ը երեքն էլ ֆէլիէտօսիստներ են:
Հէնց այստեղ է, որ տեղի է ունենում տրագի-
կօմեդիան, որովհետեւ լրագրի համարները
պիտի լցվին միմիայն ֆէլիէտօսներով, իսկ
եթէ յանձնում եւ նրանց գրել տեսնութեան
կամ քաղաքական խնդիրների մասին, հարկաւ
թող է լինում նրանց գրուածքը: Փոխանակ
առաջ բեպէրտուարի կազմակերպութեան մա-
սին մտածելու, եւ այդ բեպէրտուարի համաձայն
դերասաններ հրաւիրելու, ընդհանրապէս, նախ
հրաւիրում են խմբը եւ ապա մտածում «Բիչ
խաղանք»-ի մասին, որը ի դէպ ընտրվում է
պատահական, մինչդեռ փորձառու անարդարե-
ւեօրը գլուխ է կտրում բեպէրտուարի կազմա-
կերպութեան համար: Այս դէպքում դուրս է
գալիս, որ կոմիկ դերասանները պիտի խաղան
«Օրլէանի կոյս», «Սաֆօ», «Մէդէա», «Ռու-
դան», «Մարի Ստիւարտ» եւ այլն: Հետաքրքրա-
կան բան...

Ինչ կարիք կայ 3—4 կոմիկ հրաւիրելու,
մինչդեռ ոչ մի կոմիկիստ բեպէրտուարի մէջ չը
կայ: Խմբի մէջ բացակայ է ֆրաւաւոր սիրահար,
իսկ նրա տեղ երեք ընդհեօր կայ, չը կայ
grande coquette: Իսկ դրա փոխարէն կան եր-
կու ingénu comique.—մեղ կարող են սակ թէ

Մի վայրկեան մօտեցայ եւ հրաշագործ մե-
քենային եւ

չունենալ ոչ սիրահար եւ ոչ grande coquette—այդ սխալ է: անհրաժեշտ է միայն չինք իմանալ նրանց գործածել ըստ ամպլուաի: Հակառակ դեպքում դուրս է գալիս, որ մի դերասան այսօր խաղում է Արման (Կլամենիապուրդ տիկին) եւ վաղը Բասկիլի (Կլեմենտինա Կարսանիքը): Շատ հասկանալի է, որ այդպիսի բաղդի արժանացող դերասանը մէկ կամ միւս դերում պէտք է լինի:

Այժմ անցնենք այն ընդհանուր գծողութեան, որ վերաբերում է դեր չը դիտենալուն: Օրերում մի քանի անգամ շատ ճիշտ կերպով նկատեց, թէ որքան թարգմանութիւն կայ, նոյնքան եւ լեզու, եւ այդ կատարեալ ճշմարտութիւն է: Ի՞նչ ընդհանուր առնչութիւն կարող է լինել լատինական մարդկանց թարգմանութիւնների մէջ: Նրանցից ամեն մէկը իր սեպական լեզուն է լատինացիները, — եւ խեղճ գերմանացի լինչպէս կարող է իր մտքում դաստորոշել ամեն մի թարգմանչի սեպական ոճը, քանի որ նախադասութեան ընդհանուր կազմակերպութիւնը իրաւաբանի թարգմանիչ ըստ իր ճաշակի եւ ըստ իր հասկացողութեան է դաստորոշում: Ել չենք խօսում բաների ընտրութեան մասին: Միայն եւ եթէ ընկերակցութեան իր ժամանակին կազմված լինէր, այդ բոլոր կարելի էր մի որոշ կանոնադրված լեզուի վերածել:

Պիեմոնտի ընտրութեան մէջ էլ պակաս յանցանք չէ գործվում: Թող ների ինչ ա. Մուրացանը, եթէ եւ կանգ առնեմ նրա «Ռուզան» պիէսի վրա, որ օրերում ներկայացրինք կամ, ճիշդն ասած, տապալիքից կամ, աւելի եւս ճիշդն ասած, ինքն իրան տապալից: «Ռուզան» ինքն ըստ ինքեան պիէսն չէ: Եւ իբրեւ դրամատիկական դրուածք ոչ մի կրիտիկայի չէ դիմանում, որովհետեւ այնտեղ գործողութիւն գոյութիւն չունի, չը կան նաեւ կենդանի մարդիկ, այլ բոլոր գործող անձինք ստիպված են իրանց ձեռք ու ոտքը չարժեք տեղի ու անտեղի եւ կամ ամեն մի յարմար դէպքում դուրս քաշել իրանց փայտե պրիմեր: Գործող անձինքների մոտեցն ու ելքը ոչնչով չէ բացատրված, այլ միայն «բարեւ իշխան» կամ «միտա բարեւ իշխան» խօսքերով: Ել չենք խօսում այն հակասական եւ հոգեբանական կեղծ հիմքի մասին, որի վրա կառուցված է այդ պիէսը: Այն տեսարաններում, ուր տասնեակ գործող անձինք են կանգնած, մէկը խօսում է թէ իր եւ թէ բոլորի փոխարէն, այսինքն ինքն է տալիս հարցը եւ ինքն էլ պատասխանում, իսկ մնացածները խորտակվում պէս կանգնած են: Յետոյ այդ խորտակվածներին—այսինքն խորտակվածները ներկայացնող դերասաններին, որոնք մէջ գտնվում էր եւ ձեր խոսքը ծանոթ—ասում են թէ «ձեր դերի մէջ թող էլ չէք»: Եւ այդ դէպքում դերասանները կատարում են ճշմարտութեան նուրազանք դերը:

Շատ հարցեր կան պարզելու, բայց ի նկատի ունենալով օրաթերթի էջերը, եւ վերջացնում եմ, թողնելով շարունակութիւնը մօտիկ ապագային:

Դերասան Պ. Արաքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Անգ հաղորդում են, որ ագրոնոմ Ա. Փիրալեան տնայնագործական կոմիտեի յանձնարարութեամբ գնացել է Շուշի՝ ծանօթանալու Դաւթաբաղի գորգագործութեան եւ տնայնագործութեան ուրիշ ճիւղերի հետ:

Անգ հաղորդում են, որ ներկայ 1900 թւին Անդրկովկասում ստացվել է 4500—5000 պտուղ չեղցարական պտիւն, քան նախորդ 1899 թւին: Բայցում են նոր պանրագործարաններ եւ յոյս կայ, որ առաջիկայ 1901 թւին պանրի արդիւնաբերութիւնը աւելանայ 3—4 հազար պտուղով:

Կարճ ժամանակից յետոյ, մայրաքաղաքի լրագիրների ասելով, Պետերբուրգ կը հասնի Ֆրանսիական ամենանշանաւոր գրողներից մէկը, Մարսել Պրէյլ, որ Ֆրանսիական գրականագէտների յանձնարարութեամբ եւ նրանց կողմից բանակցութիւններ կը սկսէ առաջին հաջողութեան եւ գրողների հետ գրական դաշնադրութեան մասին:

Պետերբուրգի ընկերութիւններից մէկի մէջ, որի նպատակն է ընդհանուրին օգտակար եւ էփանալին գրքեր հրատարակել, հարց է բարձրացրած ընկերութեան միջոցներով մի ամսագիր հրատարակելու, որ իր փառանքալիութեամբ եւ գնով մատչելի լինի հասարակ ժողովրդի համար:

«Вавра» լրագրում կարդում ենք. «Ուրմիա (Պարսկաստան) գնալու համար Թիֆլիս հասաւ ուսուց ուղղափառ միսսիայի գլխաւոր Ֆեօֆիլակտ վարդապետը: Երանի է, որ Ուրմիա ապրող նշանօրական—ասորիների մէջ արդէն յիսուն տարի առաջ մեծ չարժուած սկսվեց ի նպաստ ուղղափառութեան, բայց մինչեւ

վերջին ժամանակներս մի կողմից մահմադական պարսիկների թշնամական տրամադրութիւնը, միւս կողմից օտար դաւանութիւնների միասխանակ ինտրիգները, միասին երբեք մեծ միջոցներ ունենալով, քաղաքական նպատակների են հետեւում եւ ամենից աւելի վախենում են Ռուսաստանի ազդեցութեան աճումից: Արեւելքում, այդ բոլորը չափ էր խախտաւթ լինում գործին: Վերջապէս, 1898 թւին, ձգտումը դէպի ուղղափառութիւնը, որ ծածկված էր ազդեցութեան մէջ, յաղթեց բոլոր արդիւնները, եւ 20,000 ասորի—նշանօրականներ, գլուխ ունենալով Սուլայմաքանի Մար-Եօնիան եպիսկոպոսին, վերջին երկու տարիների ընթացքում միայն ուսուց ուղղափառ եկեղեցուն, օրհնութեամբ կառավարական Սրբազան Սինոդի: Ներկայումս պարսից կառավարութեան վերաբերմունքն եւս փոխվեց դէպի միսսիան. պարսից Շահը յանուն Թաթար կայսրի ընծայեց միսսիային Ուրմի քաղաքում մօտ 3000 քառակուսի սափէն հող—մի ընծայ, որ շատ գնահատելի է միսսիայի համար ոչ միայն որպէս նւթական օգնութիւն, այլ եւ տեղական ժողովրդի մէջ նրա արեւմտիք բարձրացնելու մի միջոց: Այդ ժամանակից արդէն Ուրմիայում կազմվեց ուսուցական առանձին միսսիա, որին սկզբում յատկացվեց 10,000 ռուբլի: Այդ համեմատաբար աղքատիկ միջոցներից պէտք էր թէ ուժեղներ տալ միսսիայի պաշտօնեաներին, թէ եկեղեցիներ կառուցանել զարդաներով, եւ թէ նւթական օժանդակութիւն հասցնել նոր միջոցված ասորիներին, այնպէս որ պէտք էր կո՛ւս մղել օտարադաւան պրօպագանդայի դէմ, որը հարիւր հազարաւոր ռուբլիներ ունի իր արամադրութեան տակ: Չը նայելով այդ բանին, կարճ ժամանակում ուսուց միսսիան, հայր Ֆեօֆիլակտի ղեկավարութեամբ, հաստատեց մօտ 40 եկեղեցիներ, 60 զարդաներ եւ աշոգութեամբ ուղղափառութիւն ընդունել տուեց շատ աւանդներում եւ գիւղերում: Ներկայումս, հայր Ֆեօֆիլակտի միջնորդութեամբ, Ս. Սինոդը, ի նկատի ունենալով գործի աշոգութիւնը, մի փոքր աւելացրեց միսսիայի կարիքներին համար տրվող գրամը: Այդ շարժումը մեզ մօտ եւս թիֆլիսում արձագանք գտաւ: Ուղղափառութիւնն ընդունելուց յետոյ եպիսկոպոս Մար-Եօնի Պետերբուրգից Ուրմիա վերադառնալու ժամանակ, Թիֆլիս քաղաքում, ասորական ս. Ֆեօֆիլակտի եկեղեցում, բարձր սրբազան Միսսիայի, Վրաստանի էկզարխը, Մար-Եօնի եպիսկոպոսի պաշտօնակցութեամբ, ուղղափառութեան հետ միացրեց մինչեւ 1700 նշանօրական ասորիներ:

Ֆրանսիական միսսիոնարութիւնը որոշել է հանել գործածութիւնից պղնձայն հինգ կօպէկանոցը, որպէս խոշոր, ծանր եւ գործածութեան համար անցարմար դրամ: Այս նպատակով պետական փողերանոցը այլ եւս պատուէրներ չէ ստանում: Կինգ կօպէկանոցներ կտրվում եւ վերջինները արդէն դուրս չեն թողնվում պետական դանձարանից:

Երկաթուղային բժիշկների համաժողովը որոշեց միջոցներ, որ հաղորդակցութեան ձանաւ պարներին միջնորդութիւնը մի առանձին գուժար նշանակէ ուսուցական կուրսներում առանձին բնակարաններ չինելու երկաթուղային այն ծառայողների համար, որոնք կարօտ են այդ տեղերում բժշկվելու:

Առաջիկայ յունվար ամսին Մօսկվայում, գիւղատնտեսական ինտերիտուտի դահլիճներում, տեղի կունենայ գիւղատնտեսութեան ուսուցիչների հերթական համաժողովը, որին մասնակցելու կը հրաւիրվեն դասատուներ բոլոր գիւղատնտեսական դպրոցներից: Ժողովը բացվելու է յունվարի 4-ին եւ տեւելու է մինչեւ նոյն ամսի 9-ը:

ՍԱՄԱԿԱՆԻԹԻՑ, մեզ գրում են. «Մինչեւ այսօր Անդրկասպեան երկրը ներմուծել է 600,000 տուփ չերամի սերմ եւ սպալում է կրկին 200,000 տուփ: Եւ մի չը տեսնված քանակութիւն է անցեալ տարի եղել է 400,000 տուփ եւ երկրին բաւականութեամբ է տուել: Այժմ կրկնապատկել է սերմերի մեծ մասը Ֆրանսիական սպիտակ եւ դեղին է, ինչուստի իր կոչված տեսակից, գնեցը սաստիկ է ծան եւ. տուփը 1 ռ. 20 կ. մինչեւ 1 ռ. 30 կօպէկ: Ահապէս մրցում կայ եւ սերմաւաճառները ահ ու դող մէջ են, լաւ գիտենալով, որ բերած սերմերի կէսը մնալու են անվաճառ եւ փչանալու են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՕԼԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Զօյա եւ Դրէյֆուսի միւս պաշտպաններից մի քանիսը սաստիկ դժգոհ մնացին ներման այն օրէնքից, որ մօտ օրերումս ընդունելիցն ֆրանսիական պատգամաւորների ժողովը եւ անատոր: Ներման օրէնքը քաղաքական անհրաժեշտութեան գործ էր, ինչպէս ասաց Վալդէկ-Լուսսօ սենատում օրէնքի նախագիծը պաշտպանելու: Ֆրանսիական այժման միսսիոնար-նախագահի գնահատութիւնն էր խաղաղ վերջ դնել այդ օրէնքով Դրէյֆուսի գործին, ինչի նրանից մնացած հետքերը եւ այդպիսով վերջնականապէս խաղաղացնել Ֆրանսիան: Ուրեան եւ իրաւացի լինէր ֆրանսիական միսսիոնարութեան այս ձգտումը, բայց եւ այնպէս չէ կարելի չը խոստովանել, որ ներման օրէնքից բարոյական մեծ վնաս կրեցին մի քանի անմեղ մարդիկ, որոնք այսուհետեւ են ընտնելու դասարանի միջոցով վերականգնեցնելու իրանց անունն ու պատիւը: Այդ անմեղների թւումն է եւ յայտնի փոխ-գնդապետ Պիկար, որ այնքան նշանաւոր դեր կատարեց Դրէյֆուսի գործում:

Եւ ինչ Զօյա, որ 1898 թւին յանուն ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆորի գրած նամակով սկիզբ դրեց Դրէյֆուսի գործի վերաքննութեան, «L'Aurore» լրագրում տպագրել է այժմ մի ուրիշ նամակ՝ ուղղած հանրապետութեան այժման նախագահին: Նամակը մի ընդարձակ գրութիւն է եւ ընտնել է «L'Aurore»-ում մի քանի սիւնեակ: Զօյա այդ նամակում, ի միջի այլոց, ասում է.

«Ամօթ չէ Ֆրանսիային, որ նրա մէջ չը գտնվեց ոչ մի պետական անձն, որ զգար իրան բաւականաչափ զօրք, խելք, համարձակ եւ կարողանար գործը տանել մինչեւ վերջը: Եւ այլ եւս չեմ խօսում Միլիէի մասին, որ հովանաւորում էր յանցաւորներին, ոչ էլ Դիւպլէի մասին, որ միշտ պատրաստ է անցնելու այն մարդկանց կողմը, որոնց կողմն է ոյծը: Բայց ինչ ասել Բրիսսօնի մասին, որ համարձակութիւն ունեցաւ վերաքննութեան ենթարկել Դրէյֆուսի գործը եւ մի եւ նոյն ժամանակ թող տուեց, որ Պիկարին բանտ նստեցնեն: Ի՞նչ ասել Վալդէկ-Լուսսօյի մասին, որ մի համարձակ ձառ արտասանեց Դրէյֆուսի գործը վճռալինջ զատարանի քրէական բաժանմունքի իրաւասութիւնից հանելու դէմ եւ այժմ կապեց իր անունը ներման օրէնքի հետ, որ աւելի եւս կոպիտ կերպով կորզում է դատական գործերը արդարադատութեան ձեռքից: Մեզ ասում են, թէ ներումը իր հետ կը բերէ խաղաղացում: Իսկ մենք պնդում ենք, որ, ընդհակառակը, նա մեզ համար պատրաստում է նոր զիպուածներ, ինչպիսիք են կարելի գնել անարդարութեան գնով:

Զօյա ապա նկարագրում է, թէ նա ինչպէս էր երեւակայում Դրէյֆուսի գործի վերաւորութիւնը, թէ ինչպէս հաւատում էր, որ ժողովուրդը հրճուանքով կողոնէ արդարութեան յաղթանակը եւ շարունակում է. «Եւ վաղուց արդէն հրաժարվել եմ այդ երազից: Վաղուց հաշտվել եմ այն մտքի հետ, որ ճշմարտութիւնը միայն դանդաղ քայլերով եւ աստիճանաբար է բաց անում իր ճանապարհը: Մենք այժմ չենք մտածում Դրէյֆուսի գործի վերաքննութեան մասին: Թող ինքը Դրէյֆուսը ձգտի վերաքննել տալ գործը օրինական կարգով: Ինչքան մեր կարողութեան չափով կօզնեք նրան, երբ դրա համար առթի ներկայանայ, եւ կարծում եմ, որ վճռալինջ ատենք ուրախ կը լինի, եթէ կարողանայ ասել իր վերջին խօսքը եւ իրկել դատաստանական դատակարգի պատիւը: Այժմ մեր միակ հօգնն այն է, որ քաղաքական եւ սօցիալական հետեւանքներ հանեք այն բոլորից, որ մեզ սովորեցրեց Դրէյֆուսի գործը, որ ձգտենք այնպիսի բարենորոգումներ, որոնց անհրաժեշտութիւնը ցոյց տուեց այդ գործը: Ոչ մի բան իմ աչքում այնքան թիւր եւ սխալ չէ, ինչպէս այն կարծիքը, որ լավում է ամեն տեղ, թէ Ֆրանսիան աստիկ վնասվեց Դրէյֆուսի գործից: Եւ այլ եւս չեմ խօսում այն հրաշալի տեղարանի մասին, որ ներկայացնում էր Ֆրանսիան, երբ նա ասպարէզ հանեց իր բոլոր իդէալական ոյծերը արդարադատութեան պաշտպանութեան համար: Եւ չեմ խօսում ստացված հետեւանքների մասին, այն աւելանալու մասին, որ կատարվեց զիպուտական միսսիոնարութեան մէջ: Բայց չը հաշտվել այս բոլորը՝ միթէ Դրէյֆուսի գործը

բարեբար ազդեցութիւն չունեցաւ: այն բանով, որ նա մերկացրեց Ֆրանսիան վարակող ներքին վէրքը: Բոլոր յետադիմական ոյծերը փութում էին Պարիզի եւ երկրի հիմքերը, որպէս զի կործանեն հանրապետութիւնը, բայց Դրէյֆուսի գործը մերկացրեց նրանց նախադեմը: Հէնց այդ գործն էլ առաջ բերեց բոլոր հանրապետականների միացման շարժումը: Թող ուրեմն կառավարութիւնը, շարունակելով հանրապետականների միացումը, չը հրաժարվի Դրէյֆուսի գործից, այլ ճանաչէ եւ ընդունէ, որ նա բաղաւորութիւն էր Ֆրանսիայի համար:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, դեկտեմբերի 5-ին
Անշուշտ «Մշակ» ընթերցողներին յայտնի են այն խաղաղութիւնները, որ տեղի ունեցան Թէհրանում այս ամսո Շահի բացակայութեան պատճառով, հայր թանգութեան առիթով: Թէհրանի քաղաքապետ Աւէֆէտ-Պօլյան, ունենալով հայրի մեծ ամբար, արհեստական սովառաջացրեց, քաղաք հայ ներմուծելի արգելու լով եւ ներմուծողներին պատժելով: Ուստի զբւանով գրգռեց ամբողջ արդար բարկութիւնը, որը եւ կանանց ու երեխաների հետ յարձակվելով քաղաքապետի բնակարանի վրա, կամեցաւ իր ձեռքով պատժել իր համար գերեզման փորողին, բայց նրան չաղողվեց այդ բանը, որովհետեւ քաղաքապետը իր բնակարանի յետին դռնով փախաւ եւ թաքնվեց, ազատվելով ժողովրդի վրէժխնդրութիւնից: Բնակարանը աւերվեց եւ հողին հաւասար դարձաւ: Քաղաքապետը եւ նրա կողմնակից բարձրաստիճան անձինք այս խնդրում մեղադարտ համարեցին մի քանի յայտնի վաճառականներին, որ եւ յայտնեցին Շահին հեռագրով: Վերջինս հրամայեց անմիջապէս արտաքսել մայրաքաղաքից խռովութիւնների պատճառ եղող վաճառականներին, որը եւ կատարվեց եւ մի քանի անմեղներ գոհ եղան այդ զրպարանութեանը: Սակայն խորամանկ քաղաքապետի թակարդները երկար ժամանակ լարված դրութեան մէջ չը կարողացան մնալ: Խնդիրը պարզվեց եւ Շահը վերադառնալով Եւրոպայից, իսկողն պաշտօնակի արեց նրան եւ բանտարկել տուեց: Արդարեւ «Անյուշ» ընթերցում: Այս մի խիստ պատիժ էր լրբութեան ծայրագոյն աստիճանին հասած մի պաշտօնեայի համար, որը կամենում էր հազարաւոր որբերի եւ այրիների ու անպատեհ ամբողջ արեւմտի արեւմտի եւ քրտինքով ձեռք բերած կօպէկներով իր համար ոսկի պաշտոնը չինել:

Շահի Եւրոպա ճանապարհորդելը վառել է մի տեսակ ատելութեան կրակ հոգեւորականութեան եւ մոլեռանդ ամբողջ մէջ, որը շուտ կարող է բորբոքվել, եթէ Շահը անմիջապէս ձեռնամուխ լինի վերանորոգութիւնների: Բայց այդ բանը շուտ լաւ հասկանում է թէ ինքը Շահը եւ թէ իր խոր քաղաքագէտ Սադրաշա-մը: Շահը երբ մտնում է քաղաք, ամբողջ միջոց անցնելու ժամանակ լսվում է մի կանաչի ձայն՝ «Գնալով Եւրոպա, երեսդ այն կողմն է դարձել, հապա չղիք տեսնեմ»: Ահա մի օրինակ եւս.—Շահի պալատից ոչ շատ հեռու ապրում էր մի պարսիկ աստիճանաւոր, որը երկար ժամանակ չէր կարողանում հայտնաբերվել նայել իր որդու վարք ու բարքի վրա եւ ամեն օր կուր եւ տարածադրութեան մէջ էր: Խնդիրն այն աստիճան սուր ընթացք ստացաւ, որ հայրը խփեց իր որդուն եւ սպանեց նրան: Այդ դէպքը տեղի ունեցաւ Շահի վերադարձի օրերում: Խնդիրը Շահին հասաւ եւ նա պիտի լիւր տար: Սակայն նա այդ չարեց անմիջապէս: Նա ուղարկեց մուշտալիքի մօտ հարցնելու, թէ ինչ է պատիժը որդեւան հօր համար Շարիաթի օրէնքով: Ահա այսպիսի շատ բաներ են պատմում, որոնք ապացուցանում են, որ նա առաջին անգամ աստիճան է ժողովրդի վառված մոլեռանդութեան բոցը մի քիչ հանգսնեցնելուց յետոյ գործին ձեռնամուխ լինել: Առայժմ, ինչպէս երեւում է, Շահը իմադրել է գիւղատնտեսական ճիւղը զարգացնելու: Նրա հրամանով բերել են եւ շարունակ բերում են գիւղատնտեսական գործիքներ, ծառեր, ծաղիկներ, ձիեր եւ կովեր՝ ամենալուրջ տեսակներից իրանց եւրոպայի գիւղատնտեսներով: Սպասենք եւ տեսնենք, երբ հերթը միւսներին կը հասնի:

Օտար

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Դրէյֆուս ուղղել է միսսիոնար-նախագահ Վալդէկ-Լուսսօյին հետեւեալ նամակը. «Պ. Նախագահ: Մօսկովի մի յայտնի մասը մեղադրում է ինձ այն բանում, որ եւ 1894 թւին ուր-

զեղ եւմ գերմանական կայսրին մի զոգուելի նա-
մակ, որի վրա այդ միապետը անձամբ նկա-
տողութիւններ է գրել, որոնք ապացուցանում
են իմ յանցաւորութիւնը: Այդ նամակը, իբր
թէ, գողացված է գերմանական զետանաւորից
եւ այսպիսով ծառայել է իբրեւ օրինական ա-
պացոյց իմ յանցաւորութեան, որի համար ես
երկու անգամ դատաւարուեցի: 1891, 1898
եւ 1899 թւերին դատաւորներին ցոյց տուած
բօրքերուն, իբր թէ, այդ նամակի լուսանկարն
էր միայն: Այդ ստին ես չեմ կարող պատաս-
խանել արհամարհանքով, ի նկատի առնելով
այն աղբիւրը, որից ծագել է սուտը: Այդ ա-
ռասպելը տարածող ժողովրդային ինքը չէ
հնարել նրան. նրա յօդուածը արձագանք է
միայն այն տեղեկութիւնների, որ տուել է
նրան գնեցրալ Բուսպէֆֆի մօտիկ անձնաւո-
րութիւններից մէկը. նա, իր խօսքերը հաս-
տատուելու համար, ցոյց է տուել ժողովրդային
եւ համապատասխան վկայաթղթեր, որոնք,
ակնհերեւ է, զոգուելի կեղծիքներ են: Ժողով-
րդային հաստատանքում է, թէ նրան ցոյց են
տուած վիճելի կայսրի նամակներ եւ իմ
նրան գրած նամակի լուսանկարները: Շատ
պարզամիտներ հեշտութեամբ կարող էին այդ
անամօթ առասպելը ճշմարտութիւն համարել:
Բայց եւ այնպէս ես անպայման անմեղ եմ:
Մինչեւ վերջին շունչս ես պէտք է ձգտեմ, որ
իմ անեղութիւնս օրինաւոր կարգով ճանաչվի
եւ իմ դատաւորից քննվի: Ոչ մի ընդհանուր
կապ չը կայ իմ եւ այն բօրքերոյի հեղի-
նակի մէջ, որի վրա կան վիճելի կայսրի
նկատողութիւնները (այդ թուղթը, ակնհերեւ
է, որ կեղծիք է): ոչ մի կապ չունեմ եւս
եւ ինչուս ցոյց տուած բօրքերոյի հեղի-
նակի հետ, որ կազմել է Էստերհազին: Բացի
Հանքիլից՝ իմ դատաւարութեան զլխաւոր
մեղաւորները կեղծիքներ են զեւ եւս: Ես զբի-
ւած չեմ իմ բոլոր իրաւունքներից. ես պահել
եմ իւրաքանչիւր մարդու իրաւունքը՝ պաշա-
պանել իր պատիւը եւ պարզել ճշմարտութիւ-
նը: Այս պատճառով ես իրաւունք եմ պահել
զիմեւ ձեզ խնդրելով քննութիւն կատա-
րել եւ ես այժմ պատիւ եւսնեմ խնդրելու ձեզ
պ. նախագահ, անել համապատասխան կար-
գադրութիւններ:

—Եղբայր լրագրիւր կրկին բարձրացնում է
մեծ պետութիւնների պատերի վերացնելու
հարցը թիւրքիայում: Լրագրիւրն ասում է, որ
եմինչեւ անգամ փոքրիկ հարեւան պետութիւն-
ները, ինչպէս են՝ Յունաստանը, Բուլղարիան,
Սերբիան եւ Չէքոսլովակիան չեն ենթարկվում
մեծ պետութիւնների կողմից այնպիսի վերա-
ւորանքների, որպէս թիւրքիան, որի պետա-
կան հիմնարկութիւններին պետութիւնները
վստահութեամբ չեն նայում եւ դրանով աղ-
գաքնակութեան աչքով վայր են գցում պե-
տութեան հեղինակութիւնը, իր խօսքով ար-
դէն գանձարանին հասցրած փաստ մասին:
Եղբայր լրագրիւր, ժամանակ է արդէն
թիւրքաց կառավարութեան համար աղաւթի
Եւրոպայի ճնշումից եւ ամենից առաջ կարա-
կան միջոցներ ձեռք առնել վերացնելու ար-
տասանման պատճառները Չմիւսնիայում, Ա-
լեքսանդրէտում, Մէրսինում, Սալոնիկում,
Ծրպիլիզում, Կորաթում եւ ուրիշ նաւա-
հանգստային քաղաքներում: Լրագրիւրը յոյս ու-
նի, որ եթէ սուլթանի կառավարութիւնը
փորձ անէ այդ ուղղութեամբ, Գերմանիան,
Աւստրիան եւ Իտալիան յօժարութեամբ կա-
ջակցեն նրան եւ դրանով կը նպաստեն վերջ
դնելու այն ամօթալի դրութեան, որ կարող է
տեղի ունենալ միայն վստալ կամ բարբարոս
պետութիւնների մէջ:

—Սալմաստից թիւրքաց լրագրիւրներն գրում
են, որ թիւրքահպատակները գանգատ տուե-
ցին թեհրանի օսմանեան զետանաւոր Սալմաստի
թիւրքաց հիւպատոսի դէմ: Հիւպատոսին մե-
ղադրում են այն բանում, որ նա սեփականա-
ցրել է Ստամբուլի մի քանի վաճառականների
փողերը, որոնք այդ բանի մասին արդէն յայտ-
նել են Բ. Գրան: Արդեօք կարող են մեր ա-
ռեւորական յարաբերութիւնները զարդանալ
Պարսկաստանի հետ, ասում են լրագրիւրները:
—Երբ մեր կառավարութեան ներկայացուցիչ-
ները այդքան արատաւոր մարդիկ են լինում:
—Աթէնքի լրագրիւրները աստիկ վրդովված
են թիւրքաց օտար դաւանութիւնների մի-
նիստերի այն կարգադրութեան դէմ, որով
թիւրքաց մուստարները պէտք է տան մետ-
րիքական եւ պատկառութեան վկայականներ
թիւրքահպատակ յոյներին: Եթէ մէքիս լրա-
գրիւրն ասում է, ի միջի այլոց, որ այդպիսի
կարգադրութիւնից յետոյ կարող է հրաման
դուր գալ, որ չը միլիոններ ենթակներն ուղղա-
փառ դաւանութեան ծէսով եւ որ պատկեր
կատարեն ձօլանքը: Միթէ Գերմանիայի դաշ-
նակցութիւնը թիւրքիայի հետ խլացրեց բոլոր
միացած պետութիւնների ձայնը Ստամբուլում:
Եթէ ուղղափառ եկեղեցու հետ, որ մի այն-
պիսի զօրեղ պաշտօնաւոր ունի թիւրքիայում,
այդպէս են վարվում, ուրեմն ինչ կը լինի այն-
պիսի քրիստոնեայ եկեղեցիների դրութիւնը,
որոնք Եւրոպայում հեւատակիցներ չունեն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ
26 զեկտեմբերի
ՀԱՆԳՀԱՅ: Սիւնիֆուրից ստացված չինական
տեղեկութիւնների համաձայն, ապստամբու-

թիւն է ծագել Տունֆուսեանի զօրքերի մէջ,
որոնք, թուով 14,000 հոգի, բանակած էին
Կանսուում կիւլէնօսուի մօտ:
ԿԱՊԵՏԱՊՏ: Բնիկների տեղեկութիւնների
համաձայն, մօտ հարիւր մարդ անցել են Կան-
վիլեամ չրջանով, Մալմէսբէրի ուղղութեամբ,
յայտնի չէ, բռններ էին դրանք թէ տեղական
ֆէրմէրներ:

ԼՈՆԴՈՆ: Կիւլէնների հեռագրերը Պրէտո-
րիայից, «Բարիւնդտոն զնապետը կոիւ ունե-
ցաւ Դէլթրէյի ու Ստէնկամպի զօրախմբերի
հետ Նաուպօրտի մօտ թշնամին ստիպված
եղաւ յետ նահանջի, կորցնելով քսան մարդ:
անպիսիների կորուստները յայտնի չեն: Զօ-
րախմբի հրամանատարը՝ Դէլթրէյի գերի է առն-
ված: Գէլթրէյից եկած վերաւորները հաղոր-
դում են, թէ Նոիսի զօրքերին պատկանող մի
խումբ, 120 հոգուց բաղկացած, Լինդլէյի մօտ
կոիւ ընկնող աւելի բազմաթիւ թշնամիների
հետ: Լինդլէյի զնապետը, երկու օֆիցէրներ եւ
15 զինուոր սպանված են. երկու օֆիցէր եւ
20 զինուորներ վերաւորված են:

Պէկին, Լի-Պուսե-Չանգի ցանկութեամբ հրա-
տարակված կոնքերական հրովարտակը առա-
ջարկում է Ցինի եւ Լիխունցիանցի չը
ստորագրել զեւպանների հաւաքական յայտա-
դրը, մինչեւ չը փոխվեն 5, 7, 8 եւ 9-րդ կէ-
տերը: Չինական լրագրիւրները պատասխանեցին,
որ այժմ արդէն անհնար է յետ վերցնել համա-
ձայնութիւնը, որը արված է կայսրի հաստատ-
մամբ: Լրագրիւրները հաւատացնում են, որ չը նա-
խելով Չանգիփուսի առարկութիւններին, նրանք
որոշեցին ստորագրել վերջնական արձանա-
գրութիւնը եւ կայսերական կնիքով կնքել:

ՀԱՄԲԱ: Կրիզէրի բրոնխիտ ընթացքը բնա-
կան է, ընդհանուր դրութիւնը բաւարար է:

ՄԱԴՐԻԴ: Հանքիլիցի պատկան գաղանկական
կուսակցութիւնը դիմեց մի գրութեամբ պատ-
գամաւորների ժողովին, առաջարկելով Սպա-
նիային անյապող միանալ Հօլանդիայի կամ մի
այլ ազգի պաշտանջին՝ միջնորդ դատարան նշա-
նակելու մասին անգլո-բուրական պատերազմի
առիթով: Եթէ առաջարկութիւնն ոչ ոք չանի,
այն ժամանակ Սպանիան պէտք է նախաձեռ-
նութիւն լինի առնէ այդ գործում:

Խմբագրի՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԻՔԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)
ա մ ե գ օ Ր, բ ա գ ի կ ի ա կ ի օ Ր Ե Ր Գ Յ:
Ա Ռ Ս Ո Տ Ե Ր Ը
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վերաբու-
թեան, վերականգն (սիֆիլիս) եւ միզառեւ. հիւանդ.
Ե. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին եւ
նեւրոլոգի.
Կ. Բ. Գրիկով—12—1 ժ. ականջի, քթի եւ կո-
կորդի.
Զ. Բ. Բարանսեանց—11—12 ժ. կանանց եւ երե-
խայց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին եւ երե-
խայց.
Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը
Բ. Յ. Պրօսանովիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շապովսկի—6—7 ժ. նեւրոլոգի (էրեկ-
տորաբուծութիւն), վերին եւ ստորին.
Բ. Ս. Թաւրանով—7—8 ժ. ներքին եւ երե-
խայց.
Բ. Ս. Նաւասարդեան—7—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ճիշտ համախորհրդի (կօն-
սիլիումի) եւ օպիւրցիայի համար առանձին:
Օ. Ս. Առվիսկի—տանք. ծովագնաց եւ բժշ-
կական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերահսկող
ԲՈՑԿԱԿԵ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Մ Ե Ղ Ր

Ո Ս Կ Ե Գ Ո Յ Ե Ն Ե Ի Հ Ո Տ Ա Ի Ե Տ
Ա. Միլիարեանի մեղաւորացից
ծ ա խ վ ռ ու մ է
Ֆրէյլինսկայա փողոցում, № 14 տան մէջ:
Պուղը 9 բուրբի

ՏԱԼԻՍ ԵՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ
ՀԱՅ ԵՐ ԵՆԻ Ե Ե ԳՐԱԿԱՆ ՌԻԹԵԱՆ
Նաեւ գերմաներէնի

Հարցիւ Շ Ա Ն Թ

Փրէյլինսկայա 14, первый этаж. 6—8

Մ Ե Ղ Ր

Վաճառվում է 25 կ. ֆուստը, Գ. Մէլք-Բախ-
տանանի խանութում, Սօլոյակի փողոց, № 6:
4—6

Զ Գ Ո Լ Շ Ա Գ Է Ը Կ Ե Ղ Շ Ո Լ Մ Ե Ր Ի Գ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՈՐՆՈ-ՏԻՄՈԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Յ. Ի Ի Բ Գ Է Ն Ս
Ոչնչացնում է պեղիքները, սեւութիւնը,
դեղին բծերը, պուղիկները եւ պտուկները
եւ ներգործում է աւելորդ քրոնկու դէմ:
Խորհուրդ է արվում ձեռք բերել, որպէս
տուալէտային անուշահոտ սապօն, բարձր
արժանաւորութեան:
ՈՍԿԷ ՄԵԴԱԼ 1893 թ.ի համար:
Կտորի զինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագոր-
ծական մագաղաններում եւ դեղատներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստա-
նի համար Գ. Յ. Իւրգէնի մօտ Մօսկ-
վայում: Դէպօ, Թիֆլիսում, Աքաւուրովի
մօտ, զեղապորձական ապրանքների առեւ-
տրի կովկասեան ընկերութեան մէջ, Մու-
րիսովի եւ Գրիվսկիի, պ.պ. Պոպովների
եւ Արխանգելովի մօտ: M. 192812 1—24

Ա. Ն. ՄԻԼՈՎԻ ԵՒ Ա. Ն. ԹԱՅԻՐՈՎԻ
Նարարողիւնարեական եւ Առեւտրական Ընկերութեան

Հիմնարկողները պատիւ ունեն խոնարհաբար խնդրելու պ.պ. բաժնէտէրերին (ակցիոնե-
րներին) չորս բերել Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովին, որ տեղի կունենայ 1901 թ.ի
յունիսի 14-ին, կիրակի. 12 ժամին (կէսօրին), Թիֆլիսում, Լօրիս-Մէլքեօսկայա փողոց,
տուն № 6 Զուբայովի, հիմնարկողների գրասենեակում: Գործերն են. Ընկերութեան վարչու-
թեան անդամների ընտրութիւնը եւ վճիռներ տալ եւ այլ խնդիրների մասին Բարձրագոյն
հաստատված կանոնադրութեան համաձայն:

1—3 } Ալեքսանդր Միլով
Հիմնարկողներ } Ալեքսանդր Թայիրով

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՐԷՔ

Որովհետեւ համաշխարհային հռչակ ունեցող «Louis Roederer»-ի պա-
տեղ նկարված յայտնի մարկը տեղիք է տալիս կեղծիքների եւ նմանու-
թիւնների, ուստի առեւտրականների եւ սպառողների ուշադրութիւնն է
դարձնում հետեւեալի վրա:
Ոչ մի առեւտրական տուն, նման մեր ֆիրմային, չէ կարող յա-
ւանութիւն ունենալ, թէ որ եւ է ազգակցութիւն կամ այլ յարաբե-
րութիւն ունի «Louis Roederer» հին առեւտրական տան հետ, որի ծա-
գուծը վերաբերում է անցեալ դարի վերջին (թէպէտեւ մենք երբեք
չենք նշանակել այդ ոչ մարկաների եւ ոչ էտիկէտների վրա):
Ամեն մէկից, որ ցանկանում է ստանալ ի ս կ կ ա ն Լուի Բոդե-
րեր (Louis Roederer) խնդրվում է զննել եւ ստուգել խցանը եւ չընդունել այն չիշերը, ո-
րոնք չեն կրում յիշեալ մարկը: Ապագայում կեղծիքը եւ նմանութիւնը աւելի դժուարացնե-
լու համար, մեր չիշերը կունենան բոլոր կօնտր-էտիկէտներ, իսկ խցանները կամարցնվեն նոր
ծեւով, որ հնարաւորութիւն կը տայ վալրկենապէս բանալու չիշը, առանց ուրիշ որ եւ է
գործիքի օգնութեան:
Զմուռի փոխանակ գործ կածվի մետալեայ գլխափակ:

3—3

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
24—52
М. 9,730
ФАБР. С. СІУ И К. МОСКВА. (2)

ԲՈԺՈԺԻ ՅԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ
Պարեօրեան դրուքեամբ պատրաստված

Հ ս կ ո ղ ու թ ե ա մ ք
Մ Ի Հ Ր Ը Ն Խ Ա Ն Ժ Ե Ա Ն Ի
Առաջին կարգի վկայեալ մասնագէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն:
Երկար տարիներէ ի վեր թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած
եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պ ա մ թ է օ Ր Ե ա ն
դ Ր Ո Լ Ե ա մ ք բ նոբրված Պարտաթի տեսակ սպիտակ հունտէրէն յատկապէս եւ մասնաւոր
խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած եմք
Շերամապահական կայսրանի քննութեան համար:
Ամեն անոնք որք կը փափաքին դիւրամտելի գինեով լաւ ապրանք գնել եւ ապահով
ըլալ հունտերու տեսակին վրա, թող ձեռնի դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ
եւ Խօշափարուով քարավանսարան № 16—17, Ա. Կ. ԱՐՍԷՆ Ե Ե ընկ. գրասենեակը:
(Ե. հ. չ.) 22—30

Ս ա ր գ ի ա Վ. Ա ր ր ա հ ա մ ե ա ճ
Հասցէ. ՍՈԼՈԼԱԿ, Գանձակայեա փող. տ. Թամաշեվի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսով ընթացքում, երաշ-
խաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագայունք-
ներ գտնելու համար

Հ Ա Շ Ո Ւ Ե Պ Ը Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1) Կրկնակի խալալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտե-
ական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգե-
նաւային հաշուապահութիւն:
- 2) Առեւտրական թուարանութիւն.
- 3) Առեւտրական թղթակցութիւն:
- 4) Պարտաւորականի օրէնքները:
- 5) Գեղադրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆտների եւ ուղ-
ղուն ամենալաւ ձեռքերի:
ԵՐԱՐՈՐԴ ԴԱՐԱՆԹԱՑՔՔ ՍԿԱՎԵԼՈՒ Է ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ
Կարելի է տեսնել առաւտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երե-
կոյան:
(չ. ո. չ.) 15—25